

**ՀՈՒՆԻՍ 2019**

# **ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**«ՎԵՈՆԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ**





<b>1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ</b> .....	<b>4</b>
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում .....	5
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղափոխում .....	10
1.3. Ջրահեռացման համակարգ .....	11
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում .....	12
1.5. Էներգահամակարգ .....	13
1.6. Մեքենա-մեխանիզմներ .....	16
<b>2. Առևտրային տնօրինություններ</b> .....	<b>18</b>
2.1. Բաժանորդների տվյալներ .....	19
2.2. Հասույթ .....	19
2.3. Գանձում .....	22
2.4. Դեբիտորական պարտքեր .....	22
2.5. Ջրաչափեր .....	24
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում ....	25
<b>3. Տեխնիկական տնօրինություն</b> .....	<b>26</b>
3.1. Ջրամատակարարման շարունակականություն .....	27
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում .....	28
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ .....	31
3.4. Կարգավարման խմբի աշխատանքներ .....	31
3.5. Ջրատար համակարգի բարելավում .....	31
<b>4. Լրատվական ծառայություն</b> .....	<b>32</b>
<b>5. Որակի, առողջության և անվտանգության ծառայություն</b> .....	<b>35</b>
5.1. Փաստաթղթերի մշակում .....	36
5.2. Դասընթացներ /սեմինարներ .....	36
5.3. Համագործակցություն ՀՀ ԱԻ նախարարության հետ ...	38
5.4. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում .....	38

ՀԱՅԱԳՈՐԾՄԱՆ  
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



## 1.1 ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում շահագործման տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքում գտնվող մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարաորոնողական և ջրագծերի վերակառուցման, ինչպես նաև ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված բազմաթիվ աշխատանքներ: Վերջիններիս հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև:

### Քաղաք Երևան

● Գոտիավորման ծրագրերի շրջանակներում Մեծարենց և Մեծարենց 1-ին նրբանցք փողոցների խաչմերուկում շահագործումից հանվել է  $d=65$ մ,  $L=75$ մ պողպատե վթարային ջրագիծ, ինչի արդյունքում հաջողվել է խնայել  $Q=1.5$ լ/վ ջրաքանակ:



Մեծարենց և Մեծարենց 1նրբ. փողոցների ջրամատակարարման սխեման

● Երևան քաղաքի ջրամատակարարման ցանցի բարելավման ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքներին զուգահեռ կատարված գոտիավորման ծրագրերի ընթացքում Վ. Վահանյան 52տան մոտակայքում հայտնաբերվել է շահագործումից դուրս է բերվել է  $d=100$ մ,  $L=60$ մ և  $d=50$ մ,  $L=200$ մ վթարային խողովակաշար: Կատարված աշխատանքների արդյունքում խնայվել է  $0,5$ լ/վ ջրաքանակ:

● Փարաքար և Թաիրով համայնքների անընդհատ աճող ջրօգտագործման պահանջի բավարարման նպատակով կառուցվել է  $63$ մ տրամագիծ ունեցող  $104$ մ երկարությամբ ջրագիծ:



Փարաքար Թաիրով համայնքների ջրամատակարարման սխեման

### Քաղաք Գյումրի

● Շարունակելով նախորդ տարիների ընթացքում KFW բանկի վարկային միջոցներով իրականացված ջրամատակարարման ցանցի վերակառուցման թերի աշխատանքների կարգաբերման գործընթացը՝ հաշվետու ժամանակահատվածում Տեքստիլ թաղամասի Ն.Շնորհալի փողոցներում,  $106$  տնակային տարածքում, Պոռոշյան-Մազմանյան փողոցների խաչմերուկում և Ախուրյան խճուղում շահագործումից հանվել է տարբեր տրամագծեր ունեցող  $740$  մետր երկարությամբ վթարված ջրագծեր՝ դրանցից սնվող բաժանորդների ջրամիացումները տեղափոխելով հարևանությամբ անցնող նոր կառուցված պոլիէթիլենային ջրագծերի վրա:

● տարածքում, Պոռոշյան-Մազմանյան փողոցների խաչմերուկում և Ախուրյան խճուղում շահագործումից հանվել է տարբեր տրամագծեր ունեցող  $740$  մետր երկարությամբ վթարված ջրագծեր՝ դրանցից սնվող բաժանորդների ջրամիացումները տեղափոխելով հարևանությամբ անցնող նոր կառուցված պոլիէթիլենային ջրագծերի վրա:



Ն. Շնորհալի փողոցի ջրամատակարարման սխեմա



Պռոշյան - Մազմանյան փողոցների ջրամատակարարման սխեմա

## Գյուղ Ոսկեհասկ



Ոսկեհասկ 7-րդ և 11-րդ փողոցների ջրամատակարարման սխեմա

● Համայնքի 7-րդ փողոցում ջրագծի վթար էրարձանագրվել: Վթարավերականգնողական աշխատանքներին զուգընթաց «Շիրակե տեղամասի մասնագետների կողմից կատարվեցին նաև ուսումնասիրման աշխատանքներ՝ պարզելու ջրագծի վրա բաժանողների առկայությունը, քանի որ ջրագիծը անցնում էր հին քանդած անասնագոմի կողքով և գյուղի տներից բավական հեռու էր գտնվում: Արդյունքում պարզ դարձավ, որ այն եղել է տվյալ անասնագոմը սնուցող ջրագիծը, որն ուներ մեկ այլ միացում ևս: D=50մմ, L=25մ և D=50մմ, L=40մ պողպատե ջրագծերը խցափակման միջոցով շահագործումից դուրս հանելու արդյունքում խնայվեց 0,7լ/վ ջրաքանակ:

## Քաղաք Վանաձոր


● Դ. Դեմիրճյան, Թամանցիներ, Աբեղյան, Նաիրի տնակային ավան և Հակոբյան թաղամասերի ջրամատակարարումն իրականացվում էր օրական 4 ժամ տևողությամբ: Նշված թաղամասերի ջրամատակարարումը բարելավելու նպատակով «Լոռի» տեղամասի և գոտիավորման բաժնի կողմից շահագործումից հանվեցին  $d=300$ մմ,  $L=1500$ մ թուջե,  $d=400$ մմ,  $L=1000$ մ պողպատե,  $d=250$ մմ  $L=1300$ մ պողպատե և  $d=50$ մմ,  $L=350$ մ թուջե խողովակաշարերը, այդ թվում նաև՝ մարիչ հորը, իսկ նոր միացումները կատարվեցին Աբեղյան 36,42,50,52, Գայի 1,5,8, Հակոբյան 87,87/1-2 հասցեներում և Գայ-Խուդյակով խաչմերուկում՝  $d=25$ մմ-63մմ ջրագծերին ապահովելով շուրջօրյա ջրամատակարարում:



Մարիչ հորի սխեմա




Աբեղյան փողոցի ջրամատակարարման սխեմա



Գայի և Խուդյակովի փողոցների ջրամատակարարման սխեմա

## Քաղաք Ապարան

● Նպատակ ունենալով Ապարան քաղաքի ջրամատակարարման ցանցում ջրակորուստների մակարդակը նվազագույնի բերել Պարույր Սևակի փողոցում  $D=100$ մմ,  $L=55$ մ քայքայված թուջե խողովակը փոխարինվել է պոլիէթիլենային ջրագծով:



Պ.Սևակի փողոցի ջրամատակարարման սխեման

## Գյուղ Երզնկա



Երզնկա համայնքի ջրամատակարարման սխեման

● Համայնքում ջրամատակարարման բարելավման նպատակով փոխարինվել է  $D=63$ մմ,  $L=100$ մ պոլիէթիլենային ջրագիծ, ինչի արդյունքում կարգավորվել է համայնքի ջրամատակարարումը:

## Գեղարքունիքի մարզ

● «Վարդենիս» շահագործման տեղամասի սպասարկման տարածքում գտնվող, դաշտերով անցնող Շատջրեք-Վարդենիս  $D=250$ մմ պողպատե ջրատարի վրա գոտիավորման խմբի և տեղամասի աշխատակիցների կողմից իրականացվել են վթարաորոնողական աշխատանքներ, ինչի արդյունքում հայտնաբերվել և ճեղքի զոդման միջոցով վերացվել է թվով 2 վթար, խնայելով մոտ  $Q=6$  լ/վ ջրաքանակ:

● «Գավառ» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Լճափ, Բերդկունք և Հայրավանք համայնքներում տեղամասի աշխատակիցների կողմից տեղադրվել են թվով 4  $D=80$ մմ ճնշման կարգավորիչ փականներ, ինչի արդյունքում բացառվել են ավելցուկային ճնշումները, կարգավորվել է գյուղական համայնքների ջրամատակարարումը, խնայվել է մոտ  $Q=7$  լ/վ ջրաքանակ



## Սյունիքի մարզ



● «Միսիան» շահագործման տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Բոնակոթ գյուղի թվով 468 բնակիչ-բաժանորդների ջրամատակարարումը իրականացվում է  $D=110-159$ մմ  $L=22000$ մ երկարությամբ քայքայված և կոռոզիայի ենթարկված պողպատե և մասամբ պոլիէթիլենային խողովակներով:

«Միսիան» տեղամասի աշխատակիցների կողմից իրականացվել են վթարաորոնողական աշխատանքներ, ինչի արդյունքում հայտաբերվել և գոդման միջոցով վերացվել են պողպատե ջրագծի վրա առկա վթարները, իսկ պոլիէթիլենային խողովակները նորոգվել են համապատասխան կցամասերով: Կատարված աշխատանքների արդյունքում ավելացել է ջրամատակարարման շարունակականությունը, բարձրացել է ջրատարի շահագործման հուսալիությունը և խնայվել է մոտ  $Q=5$ լ/վ ջրաքանակ:



### Արարատի մարզ

● «Արարատ» շահագործման տեղամասի սպասարկման տարածքում տեղամասի և գոտիավորման խմբի աշխատակիցների կողմից իրականացված վթարաորոնողական աշխատանքների շրջանակներում Յեմենտի գործարանի տարածքում և «Արարատ» ՕԿՁ-ից դեպի Զոդ գնացող հատվածում գտնվող  $D=275$ մմ պողպատե խողովակի վրա հայտնաբերվել և ճեղքերի գոդման միջոցով վերացվել է թվով 4 գաղտնի վթար, որի արդյունքում խնայվել է  $Q= 18,5$  լ/վ ջրաքանակ:



● «Արտաշատ» շահագործման տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Նորաշեն գյուղում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում  $D=100$ մմ պողպատե ջրագծի վրա հայտնաբերվել և ճեղքերի գոդման միջոցով վերացվել է թվով 3 վթար, խնայելով մոտ  $Q= 5$  լ/վ ջրաքանակ:

### Արմավիրի մարզ

● «Արմավիր» շահագործման տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Դարալիկ գյուղում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել և  $D=20$ մմ ջրագծի խցափակման,  $D=100$ մմ և  $D=150$ մմ պողպատե ջրագծերի ճեղքերի գոդման և անցքերի փակման միջոցով վերացվել է թվով 5 վթար, ինչի արդյունքում խնայվել է  $Q= 4,0$  լ/վ ջրաքանակ:





Հուլիս ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարած աշխատանքները հակիրճ նկարագրվում են ստորև ներկայացված Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1՝ Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	1,767
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	27,725
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	21,852
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	57,160
Ջրաչափական հանգույնցներ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	52
Շահագործումից հանված ջրագիծ	մ	12,420
Կառուցված ջրագիծ	մ	3554.9
Կառուցված կոյուղագիծ	մ	200
Վերացված գաղտնի վթարներ	հատ	40
Փոխարինված փական	հատ	290
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	483
Մաքրված դիտահոր	հատ	161
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	120
<i>Վերացված վթարներ</i>		
Ջրամատակարարման ցանցում	հատ	1,870
Ջրահեռացման ցանցում	հատ	4,277
Պոմպակայաններում	հատ	151
Մաքրված անձրևընդունիչ	հատ	716

Հուլիս ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2՝ Վերացված վթարների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամաս	Պոլիէթիլենային խողովակներ	Մետաղական խողովակներ	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
1	Արաբկիր	33	73	0
2	Զեյթուն	0	50	0
3	Մաշտոց	15	46	0
4	Շահումյան	2	47	0
5	Ալավերդի	3	31	0
6	Բերդ	7	9	0
7	Նոյեմբերյան	22	24	0
8	Իջևան	14	22	0
9	Ստեփանավան	7	18	0
10	Տաշիր	15	4	0
11	Ապարան	11	18	0
12	Լոռի	74	60	0
13	Շիրակ	137	83	0
14	Արթիկ	50	28	0
15	Սպիտակ	13	19	0
16	Թալին	1	4	0
17	Աշոցք	9	17	0
18	Էջմիածին	14	42	0
19	Աշտարակ	18	22	0
20	Հրազդան	12	7	0
21	Չարենցավան	21	9	0
22	Աբովյան	10	7	0

h/h	Տեղամաս	Պոլիէթիլենային խողովակներ	Մետաղական խողովակներ	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
23	Կենտրոն	2	56	14
24	Հյուսիս	0	14	90
25	Հարավ	10	74	63
26	Էրեբունի	4	75	24
27	Արմավիր	3	55	30
28	Արտաշատ	71	17	52
29	Արարատ	34	10	72
30	Մասիս	44	22	48
31	Գավառ	24	0	92
32	Սևան	2	12	26
33	Մարտունի	1	19	8
34	Վարդենիս	0	10	5
35	Ճամբարակ	1	0	14
36	Դիլիջան	12	26	43
37	Վայք	4	7	14
38	Եղեգնաձոր	10	9	9
39	Զերմուկ	0	2	24
40	Սիսիան	22	18	28
41	Գորիս	4	14	28
42	Կապան	19	31	26
43	Մեղրի	1	3	9
	Ընդամենը	756	1,114	719

Վերոնշյալ աղյուսակը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ հաշվետու ժամանակահատվածում գրանցված 2,589 վթարների 26,7 %-ը վերաբերում է Երևանին, իսկ 73,3 %-ը՝ մարզերին, ընդ որում

- -Երևանում գրանցված 501 վթարների (ընդհանուրի 26,8 %) 13,2 %-ը կազմում են պոլիէթիլենային, իսկ 86,8 %-ը՝ մետաղական խողովակների վրա տեղի ունեցած վթարները:
- -մարզերում գրանցված 1,369 վթարների (ընդհանուրի 73,2 %) 50,4 %-ը կազմում են պոլիէթիլենային, իսկ 49,6 %-ը՝ մետաղական խողովակների վրա տեղի ունեցած վթարները:

## 1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է հուլիս ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3՝ Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ									Ընդամենը
	15	20	25	32	40	50	65	80	100	
Տեղադրված	782	61	17	3	0	4	0	1	1	869
Փոխարինված	194	31	2	0	0	2	0	0	0	229
Տեղափոխված	6	0	1	0	0	1	0	0	0	8
Տեխ. Ակտ	120	49	6	5	0	3	0	0	1	184
Ընդամենը	1,102	141	26	8	0	10	0	1	2	1,290

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 1,290 ջրաչափ: Կատարված աշխատանքների 85,4 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

### 1.3. ԶՐԱՅԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հուլիս ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4՝ Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում հատ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	1542	265	0
2	Մաշտոց	2540	240	6
3	Շահումյան	1950	186	55
4	Զեյթուն	720	174	0
5	Շիրակ	1546	640	78
6	Ալավերդի	2640	29	0
7	Ապարան	100	31	0
8	Արթիկ	700	107	42
9	Աշոցք	0	5	0
10	Բերդ	180	10	0
11	Իջևան	847	38	0
12	Լոռի	3850	253	0
13	Նոյեմբերյան	700	27	0
14	Սպիտակ	420	37	0
15	Ստեփանավան	165	26	0
16	Թալին	0	12	0
17	Տաշիր	400	15	0
18	Էջմիածին	0	155	0
19	Չարենցավան	1415	113	1
20	Արմավյան	3,660	103	0
21	Հրազդան	2680	123	0
22	Աշտարակ	2560	34	0
23	Կենտրոն	450	261	0
24	Հյուսիս	0	225	0
25	Հարավ	0	325	0
26	Էրեբունի	120	180	0
27	Արմավիր	340	99	0
28	Արտաշատ	0	72	0
29	Արարատ	145	45	0
30	Մասիս	369	24	0
31	Գավառ	690	56	0
32	Սևան	0	109	0
33	Մարտունի	0	23	0
34	Վարդենիս	0	10	0
35	Ճամբարակ	70	15	0
36	Դիլիջան	0	46	0
37	Վայք	0	16	0
38	Եղեգնաձոր	100	12	0
39	Զերմուկ	0	24	0
40	Սիսիան	330	85	0
41	Գորիս	0	32	0
42	Կապան	0	72	0
43	Մեղրի	220	30	0
	Ընդամենը	31449	4384	182



Վերոնշյալ աղյուսակը ցույց է տալիս, որ հաշվետու ժամանակահատվածում ընդհանուր առմամբ կատարված աշխատանքների 25,6 %-ը վերաբերում է Երևանին, իսկ 74,4 %-ը՝ մարզերին:

## 1.4. ԿԵՂՏԱԶՋՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալները.

- Սևանի N3 կոյուղու պոմպակայանի հակադարձ փականը, որը ջուրը հետ էր մղում, ապամոնտաժվել է, մաքրվել և վերանորոգվել, ինչը ապահովել է փականի անխափան աշխատանքը: Փոխարինվել է նորով նաև շարքից դուրս եկած երկրորդ աստիճանի պաշտպանության լողային տվիչը:

- Գավառ կոյուղու մաքրման կայանում ուսուճաստիճանի են բոլոր սարքավորումները՝ մասնավորապես կոնվեյերների պոլիէթիլենե պաշտպանիչ կաղապարները, ինչպես նաև կարգաբերվել են մանր ճաղավանդակի քերիչ սանրերը:

- Գավառ կոյուղու պոմպակայանի խոշոր մասնիկների հավաքման զամբյուղները, որոնք քայքայվել էին և իրենց ֆունկցիան չէին կատարում, պատրաստվել և տեղադրվել են:

- Դիլիջան կոյուղու մաքրման կայանի ջրհորում տեղադրված մաքուր ջրի պոմպի անսարք մակարդակի ազդանշանի տվիչը փոխարինվել է նորով:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե՛ էլեկտրական, թե՛ մեխանիկական), կատարվել են կարգավորումներ

Ստորև Աղյուսակ 5-ում ներկայացված են մանրամասներ:



Աղյուսակ 5՝ Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ <sup>3</sup>	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ <sup>3</sup>	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	61,575	19.8
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	89,642	27
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	152,350	5.4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	130,876	10
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	119,628	19.8
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	18,273	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	12,022	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	17,800	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	26,000	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	5,938	0	0

## 1.5. ԷՆԵՐԳԱՅԱՍԱԿԱՐԳ

Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6՝ Պ/կ աշխատանքների ամփոփ նկարագիր

h/h	Հասցեն	Աշխատանքների նկարագիրը
1	Սարգսյան 7	պոմպի աշխատանքի կարգավորում
2	Կոմիտաս 2	Էլ. սարքերի զննում կարգավորում
3	Փափազյան 13	պոմպի աշխատանքի կարգավորում
4	Քանաքեռ 14 փ. 40 - 48	պոմպի աշխատանքի կարգավորում
5	մ.Արագածոտն գ.Կոշ	պոմպի աշխատանքի կարգավորում
6	մ.Արագածոտն գ. Ագարակ	պոմպի աշխատանքի կարգավորում
7	Մամիկոնյանց 36/1	Ֆագի բացակայության ռելե, խցուկի տեղադրում, բարձր ճնշման ռելեի փոխարինում
8	Մամիկոնյանց 40/1	թողարկիչի տեղադրում
9	Սունդուկյան 15ա	պոմպի աշխատանքի կարգավորում
10	Քանաքեռ 14փ. 40 - 48	փականի տեղադրում, վերանորոգման հավաքածուի տեղադրում, բաքի միացման դետալներ
11	Կոմիտասի 42 շ.,	պոմպի աշխատանքի կարգավորում, աշխատանքները կատարվել են Հորիզոն ՄՊԸ կողմից
12	Բաղրամյանի 70 - 102	պոմպի աշխատանքի կարգավորում, Էլ. սարքերի զննում կարգավորում
13	Ադոնց 13	բաքի միացման դետալներ, բարձր ճնշման ռելեի փոխարինում, ցածր ճնշման ռելեի փոխարինում, լիսեռի փոխարինում, մանոմետրի փոխարինում
14	Իսրայելյան 43	պոմպի աշխատանքի կարգավորում, Էլ. սարքերի զննում կարգավորում
15	Էստոնական 12/1 - 101	Էլ. սարքերի զննում կարգավորում, պոմպի աշխատանքի կարգավորում
16	Օրբելի 18 - 52	փականի տեղադրում, շարժիչի վերանորոգում, Էլ. սարքերի զննում կարգավորում
17	Շինարարների 15	մեմբրանի տեղադրում, բաքի միացման դետալներ, մեմբրանի տեղադրում, մանոմետրի տեղադրում
18	Ադոնց 13 - 47	պոմպի աշխատանքի կարգավորում
19	Ն. Զարյան 3-52	պոմպի աշխատանքի կարգավորում
20	Հ.Էփին 80	պոմպի աշխատանքի կարգավորում
21	Թբիլիսյան 1,2	պոմպի աշխատանքի կարգավորում
22	գ.Առինջ(Առինջ մոլի մոտ հոսքաչափ)	Էլ. սարքերի զննում կարգավորում
23	Ն. Զարյանի 3 - 26	պոմպի աշխատանքի կարգավորում
24	Ն. Զարյանի 3 - 26	պոմպի աշխատանքի կարգավորում
25	Հակոբյան 7	պոմպի աշխատանքի կարգավորում
26	Ն.Դուման 53	պոմպի աշխատանքի կարգավորում
27	Կոմիտաս 1 - 208	պոմպի աշխատանքի կարգավորում
28	Ռուբինյանց 24	պոմպի աշխատանքի կարգավորում
29	սունդուկյանի 27 - 95	պոմպի աշխատանքի կարգավորում
30	Բաղրամյանի 70 - 102	պոմպի աշխատանքի կարգավորում
31	Վ. Փափազյանի 13 - 10	պոմպի աշխատանքի կարգավորում
32	Ադոնց 15 - 56	պոմպի աշխատանքի կարգավորում
33	Մամիկոնյանց 1/1	պոմպի աշխատանքի կարգավորում
34	Ա.Սերոբ. 11/1	պոմպի աշխատանքի կարգավորում
35	Ահարոնյան 18	պոմպի աշխատանքի կարգավորում
36	Դրոյի 24/1	պոմպի աշխատանքի կարգավորում
37	Լենինգրադյան 48/2	պոմպի աշխատանքի կարգավորում
38	Լենինգրադյան 52	պոմպի աշխատանքի կարգավորում
39	Ռայնիս 105շ	պոմպի աշխատանքի կարգավորում
40	Ռուբինյանց 23/1	պոմպի աշխատանքի կարգավորում
41	Ռուբինյանց 24	պոմպի աշխատանքի կարգավորում
42	Ռայնիս 105շ	պոմպի աշխատանքի կարգավորում
43	Լենինգրադյան 31/1	պոմպի աշխատանքի կարգավորում
44	Ազատության 11/1 - 65	պոմպի աշխատանքի կարգավորում
45	Ազատության 11/1 - 49	ցածր ճնշման ռելեի փոխարինում
46	Ա.Ավետիսյան 70	Էլ. սարքերի զննում կարգավորում
47	Ոլնեցու 49	Էլ. սարքերի զննում կարգավորում
48	գ.Զովունի	Էլ. սարքերի զննում կարգավորում
49	Լենինգրադյան 31/1	Էլ. սարքերի զննում կարգավորում

h/h	Պումպակայանների հասցեն	Աշխատանքների հակիրճ նկարագիրը
50	Սոսե 2-նրբ 8 - 33	Էլ. սարքերի գնում կարգավորում
51	Աղբյուր Սերոբ 11/3 - 45	պումպի տեղադրում, եռաֆազ թողարկչի փոխարինում, ավտոմատիկայի կառավարիչ, բաքի միացման դետալներ
52	Ն. Սուրենյանց 4 - 52(11/2)	եռաֆազ թողարկչի փոխարինում, պումպի տեղադրում, բաքի միացման դետալներ, աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից
53	Վաղարշյան 24/2 50 ԲՆ	պումպի աշխատանքի կարգավորում
54	Ն. Սուրենյան 2 - 52	պումպի աշխատանքի կարգավորում
55	Փափազյան 16բ	բարձր ճնշման ռելեի փոխարինում, շարժիչի վերանորոգում, աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից ,
56	Կոմիտաս 45/1	պումպի աշխատանքի կարգավորում
57	Ն. Սուրենյան 1(11/2)	եռաֆազ թողարկչի տեղադրում, շարժիչի վերանորոգում, աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից, ավտոմատիկայի կառավարիչ աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից վերանորոգման հավաքածուի տեղադրում, էլ. ավտոմատ անջատիչի փոխարինում
58	Զարյան 3	պումպի աշխատանքի կարգավորում
59	Մարգարյան 2-րդ նրբ.122	պումպի աշխատանքի կարգավորում
60	Լենինգրադյան 31/1	պումպի աշխատանքի կարգավորում
61	Սեբաստիա 25	պումպի աշխատանքի կարգավորում
62	Բաբայան 34	պումպի աշխատանքի կարգավորում
63	Ծերենց 5	պումպի աշխատանքի կարգավորում
64	մ.Արմավիր ք.Էջմիածին Շահումյան 46, 4822	խցուկի տեղադրում, փականի տեղադրում, բանող անվի փոխարինում, վերանորոգման հավաքածուի տեղադրում
65	Կոմիտասի 50 - 5	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից
66	Բաղրամյան 1 փակ. 14 - 98	փականի տեղադրում, շարժիչի վերանորոգում
67	Վրացական 4նրբ. 72	պումպի աշխատանքի կարգավորում
68	Թբիլիսյան խճ. 35/1	պումպի աշխատանքի կարգավորում
69	գ.Պռոշյան	շարժիչի վերանորոգում, կոնդենսատորի փոխարինում
70	մ.Արմավիր գ.Այգեկ	շարժիչի վերանորոգում, առանցքակալի տեղադրում
71	Ռուբինյանց 24	պումպի աշխատանքի կարգավորում
72	Քանաքեռ ՀԷԿ	պումպի աշխատանքի կարգավորում
73	Լենինգրադյան 48/2	պումպի աշխատանքի կարգավորում
74	Հալաբյան 48	պումպի աշխատանքի կարգավորում
75	գ.Պռոշյան	եռաֆազ թողարկչի փոխարինում
76	Մամիկոնյանց 49/1 - 54	պումպի աշխատանքի կարգավորում
77	Ավետիսյան 80	պումպի աշխատանքի կարգավորում
78	Արաբկիր 19փ. 6-97	պումպի աշխատանքի կարգավորում
79	Ռուբինյանց 23	պումպի աշխատանքի կարգավորում
80	Վրացական 4նրբ 7	պումպի աշխատանքի կարգավորում
81	Հակոբյան 1	պումպի աշխատանքի կարգավորում
82	գ.Պռոշյան	Էլ. սարքերի գնում կարգավորում
83	Աղոնց 17 - 54	պումպի աշխատանքի կարգավորում
84	Վրացական 6	պումպի աշխատանքի կարգավորում
85	Դրոյի 14/1	պումպի աշխատանքի կարգավորում
86	Շահումյան 8/1	պումպի աշխատանքի կարգավորում
87	Ահարոնյան 18	պումպի աշխատանքի կարգավորում
88	Կոմիտասի 45/1-78	պումպի աշխատանքի կարգավորում
89	Մամիկոնյանց 47/1 - 51	բարձր ճնշման ռելեի փոխարինում
90	Ուլնեցու 66	պումպի աշխատանքի կարգավորում
91	Խաչատրյան 24	պումպի աշխատանքի կարգավորում
92	Թբիլիսյան խճ. 2 - 109	պումպի աշխատանքի կարգավորում
93	Վ. Փափազյանի 16/2 - 61	պումպի աշխատանքի կարգավորում
94	Ռուբինյանց 24	պումպի աշխատանքի կարգավորում
95	գ.Զովունի	պումպի աշխատանքի կարգավորում
96	Վ. Փափազյանի 16/2 - 61	պումպի աշխատանքի կարգավորում
97	Քանաքեռ ՀԷԿ 2/2Շ	պումպի աշխատանքի կարգավորում
98	մ.Արագածոտն գ.Կոշ	պումպի աշխատանքի կարգավորում
99	Աղոնց 13 - 85	պումպի աշխատանքի կարգավորում
100	Գուլակյան 16/2 - 35	պումպի աշխատանքի կարգավորում
101	Ռուբինյանց 23/12	պումպի աշխատանքի կարգավորում
102	Օրբելի 18	պումպի աշխատանքի կարգավորում
103	Զարյան 3 - 25	լիսեռի փոխարինում, շարժիչի վերանորոգում, առանցքակալի տեղադրում
104	մ.Արագածոտն գ.Կոշ	ցածր ճնշման ռելեի փոխարինում, ժամային ռելեի տեղադրում, էլ. թողարկիչի նորոգում, էլ. ավտոմատ անջատիչի փոխարինում, Ֆազի բացակայության ռելե
105	մ.Կոտայք ք.Աբովյան Գեղարդի 52	մանոմետրի փոխարինում, Ֆազի բացակայության ռելե, փականի տեղադրում

h/h	Պումպակայանների հասցեն	Աշխատանքների հակիրճ նկարագիրը
106	մ.Շիրակ ք.Գյումրի,Ղանդիլյան 28ա	պոմպի աշխատանքի կարգավորում
107	Հալաբյան 48	պոմպի աշխատանքի կարգավորում
108	Մագարյան 7 - 32	շարժիչի վերանորոգում, խցուկի տեղադրում
109	Կոմիտաս 1	պոմպի աշխատանքի կարգավորում
110	գ.Ջովունի	էլ. սարքերի զննում կարգավորում
111	Փափազյան 11շ	պոմպի աշխատանքի կարգավորում
112	Վ. Վաղարշյանի 3 - 37	էլ. սարքերի զննում կարգավորում
113	Մամիկոնյանց 62	եռաֆազ թողարկչի տեղադրում, առանցքակալի տեղադրում, բարձր ճնշման ռելեի փոխարինում, շարժիչի վերանորոգում, բաքի միացման դետալներ, մանուետրի տեղադրում
114	ք.Էջմիածին Շահումյան 46,48	եռաֆազ թողարկչի փոխարինում
115	Ազատության 3/1 - 53	պոմպի աշխատանքի կարգավորում
116	Ն.Ջարյան 3	պոմպի աշխատանքի կարգավորում
117	Ա3թաղ. 26շ	պոմպի աշխատանքի կարգավորում
118	Վ. Վաղարշյան 1-46	պոմպի աշխատանքի կարգավորում
119	Ազատության 3/1 - 53	առանցքակալի տեղադրում, շարժիչի վերանորոգում, բարձր ճնշման ռելեի փոխարինում, ավտոմատիկայի կառավարիչ
120	Ա3թաղ. 16շ	փականի տեղադրում, լիսեռի փոխարինում, բարձր ճնշման ռելեի փոխարինում
121	Ա3 թաղ. 25շ	պոմպի աշխատանքի կարգավորում
122	մ.Արագածոտն գ.Կոշ	պոմպի աշխատանքի կարգավորում
123	Վրացական 6 շ	պոմպի աշխատանքի կարգավորում
124	Կոմիտասի 46 - 51	էլ. ավտոմատ անջատիչի փոխարինում
125	մ.Արագածոտն գ.Կոշ, 5-րդ փողոց 13փակուղի	պոմպի տեղադրում
126	Վրացական 6 - 58	էլ. սարքերի զննում կարգավորում
127	Բաշինջաղյան 1-ին նրբ 15 շ 48	էլ. սարքերի զննում կարգավորում, պոմպի աշխատանքի կարգավորում
128	Ազատության 6	պոմպի աշխատանքի կարգավորում
129	Պարոնյան 28	պոմպի աշխատանքի կարգավորում
130	Ս.Նովա 20	d=50մմ զննված փականի փոխարինում
131	Ձորաղբյուր ՕԿՁ	63A 1 հատ եռաֆազ ավտոմատ անջատիչի փոխարինում , օտագործվել է 2x4 հաղորդալար 6գծ/մ
132	գ. Ջրվեժ պ/կ	պոմպը միացվել է հաջորդաբար
133	Ն.Նորք 5-րդ գանգ.	Հոսքաչափի զննված մալուխի վերանորոգում 15գծ/մ
134	գ. Ջրվեժ պ/կ	Ձորամասի մուտքի հոսքաչափի հաղորդալարի վերանորոգում 5գծ/մ
135	Նորագյուղ	Պոմպի d=100մմ ֆիլտրի տեղադրում
136	գ. Ջրվեժ պ/կ	Պոմպի այրված շարժիչի ապամոնտաժում և տեղափոխում նորոգման
137	Նորք Մարաշ	Հոսքաչափի վթարված հաղորդալարի փոխարինում 150գծ/մ
138	Ավան Գեսի մոտ	Հոսքաչափի վթարված հաղորդալարի փոխարինում 100գծ/մ
139	Վրացյան 84/1	Եռաֆազ մալուխի անցկացում, օգտագործվել է եռ.մալուխ 4x6-70գծ/մ
140	գ. Ջրվեժ պ/կ	Պոմպի այրված շարժիչի տեղադրում
141	Նորագյուղ պ/կ	Ներքին հաշվիչի տեղադրում
142	Գ.Նժդեհի 32/1	Այրված մալուխի փոխարինում՝ օգտագործվել են հետևյալ նյութերը. 1. մալուխ 4x6մմ 50գծ/մ , խողովակ 50մմ 3գծ/մ
143	Արարատյան ՕԿՁ	Մոտակայքում գտնվող հոսքաչափի նորոգում
144	Վրացյան 84/1	Պոմպակայանում տեղադրվել է նոր պոմպ
145	Հյուսիս տեղամաս	էլ. մալուխի նորոգում
146	Արգիշտի 7/4	d=100մմ խողովակի ճեղքի զոդում
147	Ձորաղբյուր ՕԿՁ	Մալուխի նորոգում
148	Նուբարաշեն Ա8 թաղ	Թողարկիչի մոնտաժում
149	Մանթաշյան 26	d=25մմ փականի և d=40մմ ճկուն միացման մոնտաժում

## 1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Հուլիս ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար

«Արևելք» ՍՍ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար հուլիս ամսվա ընթացքում նորոգվել են թվով 8 մեքենաների շարժիչները՝ մասնակի և ընդհանուր, փոխարինվել են հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղկվել և կարգավորվել են գլխիկները:

Թվով 6 մեքենաների արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճուպանները:

Սնուցման և գազի համակարգի նորագույն է իրականացվել թվով 2 մեքենաների վրա, փոխարինվել են ժիգյորներ, ներդիրներ, ասեղներ, բարձր ճնշման շտուգերներ, լիցքավորման հետադարձ փականներ:

Առջևի համակարգի նորոգում է կատարվել թվով 3 մեքենաների վրա, փոխարինվել են գնդավորներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ:

Հետևի համակարգի նորոգումներ են կատարվել թվով 4 մեքենաների վրա, փոխարինվել են կարդանի խաչուկներ, ատամնանիփներ, առանցքակալներ, կիսասոնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Իրականացվել է թվով 5 մեքենաների խլացուցիչների նորոգում և փոխարինում, կատարվել են գոդման աշխատանքներ, ռետինների, ներդիրների և խամուտների փոխարինում:


Թվով 2 մեքենաների վրա իրականացվել է գեներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիողային կամրջակներ, առանցքակալներ և տուլկիներ:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 11 մեքենաների վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Թվով 26 անվաղողեր նորոգվել են, փոխարինվել և հավասարակշռվել են:

Փոխարինվել են թվով մեքենամեխանիզմների շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր և գտիչներ:

Թվով 6 մեքենաների մարտկոցները փոխարինվել են նորերով: Նորոգվել է թվով 7 մեքենաների փոխանցման տուփերը, փոխարինվել են ատամնանիփները, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները:



Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 13 մեքենամեխանիզմների վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ատամնանիփներ, առանցքակալներ, կիսասոնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Թվով 8 մեքենաների վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Թվով 9 մեքենաների և էքսկավատորների համար նորոգվել է բարձր ճնշման մղիչներ և ռետինե խողովակներ: Վերանորոգվել են թվով 2 մեքենաների հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամուփ լարեր, ռելեններ, վառոցքի բանալիներ:



Թվով 6 մեքենաների մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդերները:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենամեխանիկներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:



ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



## 2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏԿՅԱԼՆԵՐ

Մ.թ. ապրիլից կառուցվածքային փոփոխությունների արդյունքում ՄՏՍՏ սպասարկման տարածքներից Աբովյան, Էջմիածին, Մասիս և Ապարան տեղամասերը դարձան ԵՏՍՏ սպասարկման տարածքներ մոտ 65,000 բաժանորդներով:

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: Գործընթացի առավել աղյուսավետ կազմակերպման համար ԵՏՍՏ-ում ներգրավվել են 259, իսկ ՄՏՍՏ-ում՝ 62 պայմանագրային աշխատակից: 01.08.2019 թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել ԵՏՍՏ-ում՝ 317,805, իսկ ՄՏՍՏ-ում՝ 167,490 պայմանագիր:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	2018թ. հունվար - 2019թ. հուլիս ամիսներին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	424,856	305,263	71,8
		Իրավաբանական անձ	19,770	12,542	63,4
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	193,729	161,162	83,2
		Իրավաբանական անձ	8,014	6,328	79,0
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	618,585	466,425	75,4
		Իրավաբանական անձ	27,784	18,870	67,9

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հուլիս ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	462,148	357,976	77,5
		Իրավաբանական անձ	23,050	15,969	69,3
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	253,557	193,729	76,4
		Իրավաբանական անձ	9,784	8,014	81,9
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	715,705	551,705	77,1
		Իրավաբանական անձ	32,834	23,983	73,0

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի վերահսկողական խմբի աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ (Հայաստանի էլեկտրական ցանցեր և այլն): ԵՏՍՏ սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 374 նոր բաժանորդ, իսկ ՄՏՍՏ սպասարկման տարածքում՝ 186 նոր բաժանորդ:

## 2.2. ՀԱՍՈՒՅԹ


Սպառման ծավալների ավելացման նպատակով շարունակվում են կասկածելի սպառման ծավալներ ունեցող իրավաբանական անձ հանդիսացող, ինչպես նաև ԵՏՍՏ-ի «Շենգալիթ», «Հյուսիս», «Շահույան» և ՄՏՍՏ-ի «Լոռի», «Շիրակ» տեղամասերի սպասարկման տարածքների բնակիչ-բաժանորդների ջրաչափերի փոխարինման աշխատանքները: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը:


Բոլոր փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Հուլիս ամսվա ընթացքում ԵՏՍՏ-ում ստուգաչափվել է 3,775, իսկ ՄՏՍՏ-ում՝ 1,075 ջրաչափ:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Սարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 06.2019
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	1,815	771	101	2,687
		Իրավաբանական անձ	53	29	6	160
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	460	469	70	999
		Իրավաբանական անձ	43	28	5	76
	Ընդամենը		2,371	1,297	182	3,922

Ստուգաչափված ջրաչափ (Երևան)



Ստուգաչափված ջրաչափ (Մարզեր)




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:


Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա բաժանորդների տվյալների բազա է մուտքագրվել 169,998 մ<sup>3</sup> վերահաշվարկված հատույթ (81,8 % Երևան և 18,2 % մարզեր):

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2019թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հատույթ (Երևան)



Հասույթ (Մարզեր)




Հուլիսին ընկերության առևտրային տնօրինությունների կողմից ձևավորած հասույթի առաջադրանքի կատարողական ցուցանիշները բերված են ստորև աղյուսակի տեսքով.


Տարածաշրջան	Առաջադրանք հազ.մ <sup>3</sup>	Փաստացի հազ.մ <sup>3</sup>	Տարբերություն %, հազ.մ <sup>3</sup>
Երևան Մարզեր Ընդամենը	9238.2 3,486 12,724.2	9394.2 3,381 12,775.2	1.69 -3,0 0.4

Ստորև բերված գրաֆիկում արտացոլված են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական սպառման ծավալների վերաբերյալ տվյալները.

Ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական ծախսը (Երևան)



Ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական ծախսը (Մարզեր)



### 2.3. ԳԱՆՁՈՒՄ

Գանձման բարձր մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Հուլիս ամսին գանձումը ԵՏՍՍ-ում կազմել է 1,426,645 մլն դրամ, իսկ ՄՏՍՍ-ում՝ 511,692 մլն դրամ:

Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումներն ապահովելու նպատակով ընկերությունում կիրառվում է բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը:

Ընկերության ձևավորված հասույթի դիմաց գանձման առաջադրանքի կատարման տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում:

Տարածաշրջան	Գանձում	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս
Երևան	Առաջադրանք/մլն դրամ	1,111,564	1,068,993	1,023,278	1,136,162	1,200,614	1,250,688	1,421,559
	Հավաքագրում/մլն դրամ	961,127	1,066,773	1,207,447	1,265,886	1,383,789	1,278,933	1,426,645
	%	86	100	118	111	115	102	100
Մարզեր	Առաջադրանք/մլն դրամ	485,310	528,579	519,889	519,889	459,526	529,347	529,647
	Հավաքագրում/մլն դրամ	394,761	428,304	489,054	446,494	435,710	416,331	511,692
	%	81	81	94%	86	95	79	97
Ընդամենը	Առաջադրանք/մլն դրամ	1,596,874	1,597,572	1,543,167	1,656,051	1,660,140	1,780,035	1,780,035
	Հավաքագրում/մլն դրամ	1,355,888	1,495,077	1,696,502	1,712,379	1,819,499	1,695,264	1,695,264
	%	85	94	110	103	110	95	95

### 2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

Առևտրային տնօրինությունների աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը՝ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով: Հուլիս ամսվա ընթացքում ԵՏՍՍ կողմից կնքվել է թվով 163 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 16.08մլն դրամ ընդհանուր գումարով, իսկ ՄՏՍՍ կողմից՝ թվով 111 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 6.8 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ չոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Մտորև աղյուսակով ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը՝ ըստ քանակի և գումարի (այս մասով մայիսի ամսական հաշվետվությամբ ներկայացված տվյալները ներառում էին նաև հուլիս ամսվա տվյալները):

Դատարան ներկայացված գործերի քանակը, 2018-2019 թ. հուլիս ներառյալ		Բավարարված		Մերժված		2017-2019 թթ. ընթացիկ գործեր		2017-2019 թթ. ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
4,815	583,816,148	3,229	390,553,171	107	8,657,150	5,834	655,841,666	1,745	135,436,279

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 67 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 2 %-ը մերժված:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ բաժանորդներին պարբերաբար ուղարկվում են հիշեցումներ (փոստային ծանուցում) Գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հիշեցում ստացած, բայց վճարում չկատարած բաժանորդների հետ տարվում են անհատական աշխատանքներ: Անհրաժեշտության դեպքում իրենց պայմանագրային պարտավորությունները չկատարող բաժանորդների ջրամատակարարումը դադարեցվում է կամ պարտքերի գանձմանը տրվում է իրավական ընթացք:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.


Տարածաշրջան	Պարտքը 01.08.2019թ. դրությամբ (մլն. դրամ)	Այդ թվում մարտ ամսվա հասույթ (մլն. դրամ)
Երևանի տարածաշրջան, այդ թվում	4,012.3	1,637.1
Բնակիչ-բաժանորդներ	2,756.5	1038.7
Բրավաբանական անձեր	1,255.8	598.4
Մարզերի տարածաշրջան, այդ թվում	1,744.6	554.1
Բնակիչ-բաժանորդներ	1,348.0	403.8
Բրավաբանական անձեր	396.5	150.4
Ընդամենը, այդ թվում	5756.9	2191.2
Բնակիչ-բաժանորդներ	4104.5	1442.5
Բրավաբանական անձեր	1652.3	748.8

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:


ԵՏՍՍ սպասարկման տարածքում շուրջ 231.1 մլն դրամը կուտակվել է երեք բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը, «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքը և Կոնդի Առանձնատների Տնտեսություն ՊՈԱԿ-ը:

ՄՏՍՍ մասով հանրապետական բյուջեի պարտքը 01.08.2019թ. դրությամբ կազմում է մոտ 95.0 մլն դրամ (Պաշտպանության նախարարություն, ՔԿՀ և այլն), որը կվճարվի առաջիկայում:

2019 թ. դեբիտորական պարտքերի շարժը, մլն.դրամ (Երևան)



2019 թ. դեբիտորական պարտքերի շարժը, մլն.դրամ (Մարզեր)



## 2.5 ԶՐԱՉԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.07.2019 թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տարածաշրջան	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Երևան	Ջրաչափով	447,627	356,512	79.6	22,356	15,961	71.4
	Առանց ջրաչափի	14,521	1,472	9.7	694	8	1.1
Մարզեր	Ջրաչափով	231,316	168,390	72.8	9,539	6,927	72.62
	Առանց ջրաչափի	22,241	1,541	6.93	245	4	1.63
Ընդամենը	Ջրաչափով	678,943	524,902	77.3	31,395	22,888	72.9
	Առանց ջրաչափի	36,762	3,013	8.2	939	12	1.3

Տվյալների բազայում 01.08.2019թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տարածաշրջան	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Երևան	586,275	291,839	49.8	25,336	5,605	22.1
Մարզեր	264,944	67,224	25.37	10,918	1,846	16.91
Ընդամենը	851,219	359,063	42.2	36,254	7,451	20.6

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում Երևանում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 4,499, իսկ մարզերում՝ 1,685 ջրաչափական սարք: Այդ թվում՝ ԵՏՍՍ սպասարկման տարածքում նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 90, իսկ ՄՏՍՍ սպասարկման տարածքում՝ 416 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:



ԵՏՏՏ սպասարկման տարածքում ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափների ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափների քանակ	%
գ.Քասախ	2206	1650	74.8
գ.Պռոշյան	1513	919	60.7
ք.Հրազդան, միկրոշրջան թաղ.	5022	1294	25.8

«Լոռի» տեղամասում ընկերության վարչական և տեխնիկական տնօրինությունների հետ համատեղ իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Հուլիս ամսին ջրաչափերի փոխարինման աշխատանքները շարունակվել են Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Սիսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 5,562, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 3,220, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 471, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 753, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 356, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 352 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 599 ջրաչափական սարք:

## 2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԳՐԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Շարունակվում են ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են տարածաշրջանի տնօրինությանը ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տարածաշրջան	Քանակ	Խ.մ.	Գումար (դրամ)
Երևան	107	81,697	13,499,216
Մարզեր	220	94,492	15,548,373
Ընդամենը	327	176,189	29,047,589

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՈՒՆ




### 3.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված են Երևան քաղաքի հուլիս ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը՝ 97.9 %, որը 2 %-ով ավել է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:





Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:




Ջրամատակարարման շարունակականություն



Հաշվետու ամսվա ընթացքում շահագործման տարածաշրջանների տնօրինություններում թվով 51 ՃԿՓ-ների վրա տեղադրվել են ճնշման լոգերներ: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նշված ՃԿՓ-ներից 13-ն անսարք են: Անսարքությունները վերացվել են համապատասխան ստորաբաժանման կողմից:

Ստորև ներկայացված են որոշ կարգաբերված ՃԿՓ-ների վրա տեղադրված ճնշման լոգերների գրաֆիկները. (նկարներում պատկերված ուղղահայաց կարմիր գիծը ցույց է տալիս իրավիճակն աշխատանքներից առաջ և հետո):






### 3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում նվազել է 95,210 կՎտ/ժ. (13,79%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

#### Երևան քաղաքի բաղախին պոմպեր



● Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով յուրաքանչյուր պոմպի շահագործման խնդիրների հայտնաբերման նպատակով:


Ստորև ներկայացված են հուլիս ամսվա ընթացքում շեղում ունեցող հասցեներից մի քանիսը.

Հասցե	Հայտնաբերված թերություններ	Ամսական կՎտ/ժամ
Աշտարակ	հավելագրում	1200
Աշտարակ	հավելագրում	700
Երևան	հաշվառման սարքի կարգաբերում	2000
Ընդամենը		3,900

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է թվով 83 հասցե: Երկու հասցեում հայտնաբերվել են հավելագրումներ, որոնց մասին տեղեկացվել են «ՀԷՑ» ՓԲԸ-ի համապատասխան ծառայությունները թերությունները վերացնելու նպատակով, իսկ մեկ հասցեում կատարվել է հաշվառման սարքի կարգաբերում:


● Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության արդյունքում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 4,356.62 կՎտ/ժ կամ 22%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

### Էջմիածին




● Շիրակ քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության շնորհիվ էլ. էներգիայի ծախսը նվազել է 8,237 կՎտ/ժ կամ 21.5%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

### Շիրակ




● Հուլիս ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսն նվազել է 1,105,502 կՎտ/ժամ կամ 26,42 % (անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ):

*Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա*




● Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը նվազել է 286,092 կՎտ/ժամ կամ 9,22 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

*Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա*



● Ընդհանուր էլ. էներգիայի ծախսն նվազել է 1,489,267 կՎտ/ժ կամ 17,30 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

*«Վեոլիա Ջուր»ՓԲԸ-ի կողմից սպառած էլ. էներգիա*




### 3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացվում են հուլիս ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական բաժանորդների տեղադիրքի ճշտում	հատ	83
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական բաժանորդների տեղադիրքի ճշտում	հատ	14
Նոր կետերի ավելացում՝ ֆիզիկական բաժանորդներ	հատ	97
Նոր կետերի ավելացում՝ իրավաբանական բաժանորդներ	հատ	9
Մոդելավորման աշխատանքներ (փորձնական ընտրվել է Արաբկիրը)	հատ	1
ԱՅ ձևաչափով քարտեզների տպում և տրամադրում	հատ	6
Վթարային ջրանջատումներ (համայնքների քանակ)	հատ	1
Պլանային ջրանջատումներ (համայնքների քանակ)	հատ	1
ՀՀ սեփական, բազմաբնակարանային և իրավաբանական բաժանորդների խմբավորման և լրացման աշխատանքներ (ըստ սպասարկման տարածքի, լոգերի և լոգեր գոտիների, ժամային գրաֆիկի), ֆիզիկական բաժանորդների տվյալների մշակում և մուտքագրում բազա	հատ	20,190
Քարտեզների տպագրում (Էրեբունի գանգված, Աերացիա թաղամաս, Արցապի փ, Բարձրաշենի, Նուբարաշենի թաղամասեր, Սարյան փ, Շարուրի փ, Ազաթանգեղոս փ.)	հատ	8

### 3.4. ԿԱՐԳԱԿԱՐՄԱՆ ԽՍՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Դիսպետչերական ծառայությունը ա.թ. սեպտեմբերին տեղափոխվել է Աշտարակ քաղաքից Երևան և այսուհետ գործունեությունը շարունակում է ծավալել Աբովյան 66 ա հասցեում՝ «Վեոլիա Ջուր» գլխամասային գրասենյակից: Աշխարհագրական տեղեկատվական համակարգի և գոտիավորման բաժնի հետ նույն շենքում գտնվելով՝ վերջինս կապահովի առավել արդյունավետ աշխատանք համագործակցության և թիմային մթնոլորտում:



### 3.5. ԶՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

#### Արարատյան ջրատար

● Արարատյան 3-րդ ջրատարի վրա շահագործման ընթացքում առաջացել էին վթարներ՝ Q=90 լ/վ: Հարավ տեղամասի աշխատակիցների մեծ ներգրավվածության շնորհիվ վերոհիշյալ վթարների մեծ մասը վերացվել է կորուստը հասցնելով 30 լ/վ-ի:

#### Գառնի-Արտաշատ ջրատար

● Գառնի ձորում, ճանապարհաշինարարական աշխատանքների հետ կապված, անհրաժեշտություն է առաջացել տեղափոխել Գառնի – Արտաշատ 400 մ երկաթե խողովակաշարը, որի համար կառուցվել է 74 մետր ջրագիծ: Իրականացվել է ջրատարի մատակարարման դադարեցում, որի շնորհիվ խողովակաշարը միացվել է մայր ջրատարին:

Գառնի-Արտաշատ ջրատարի վրա առաջացել էին վթարներ, որոնց մի մասը վերացվել է Արտաշատ ՇՏ-ի ուժերով: Վերակազմվել է 20 լ/վ ջրակորուստ: Իսկ քարայթափի հետևանքով առաջացած վթարների հնարաոր չէր վերացնել, քանի որ այդ հատված տանող ճանապարհի անանցանելիության պատճառով անհնարին է մոտեցնել տեխնիկան:

ԼՐԱՏՎԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ





Հաշվետու ամսին հանրային կապերի մասով աշխատանքներն ընթացել են ներգրավված կազմակերպության՝ «Էներգետիկայի հայկական գործակալություն» հիմնադրամի/Հիմնադրամ/ ղեկավարությամբ և մասնակցությամբ: Նպատակը եղել է հնարավորինս լայն ներկայացնել հանրությանը «Վեոլիա ջուր» ՓԲԸ աշխատանքն իր ողջ բազմազանությամբ ու խնդիրներով, սկսած պաշտոնական տեղեկատվությունից մինչև մարզերի տեղական նշանակության իրադարձությունները:

Դրա համար որպես սպառողների հետ հաղորդակցության հիմնական կապուղի դիտարկվել է ընկերության ֆեյսբուքյան էջը, որն արդեն ունի ավելի քան 16 հազար այցելու: Այստեղ մշտապես տեղադրվող մրցույթների, գնումների, ջրանջատումների, շինարարության, վթարի վերացման և այլնի վերաբերյալ հայտարարություններն ավելի տեսանելի ու ընկալելի դարձնելու նպատակով Հիմնադրամի ֆեյսբուքյան թիմը դրանք ներկայացնում է հնարավորինս վառ, գունագեղ, ցայտուն, այդ թվում ինֆոգրաֆիկայի տեսքով:



Դրա օրինակը հուլիսին Վեոլիա Գրուպի Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի գոտու գործադիր փոխնախագահի տեղակալ, «Վեոլիա Ջուր» ծրագրի ղեկավար Մալիկա Գենդուրիի այցերն էին Երևան:



Դրա շրջանակներում ամսվա սկզբին ներկայացվել է նրա հանդիպումները՝ լուսանկարաշարով ՀՀ ՀՕԿՀ-ի նախագահ Գարեգին Բաղդասյանի և ՀՀ ՏԿԵ նախարար Սուրեն Պապիկյանի հետ: Իսկ ամսվա վերջին հրապարակում է ապահովվել Մալիկա Գենդուրիի ու Սուրեն Պապիկյանի նոր հանդիպման արդյունքների վերաբերյալ:

Ամսվա ընթացքում ակտիվությունը ուղիղ համեմատական է եղել լուսաբանվող խնդիրների կամ թեմաների հրատապությանը: Այսպես, 4 հեռուստաալիքով, ինչպես նաև այլ լրատվամիջոցներով ու մեր ֆեյսբուքյան էջով անդրադարձ է կատարվել համակարգի համար շատ կարևոր մի խնդրի. սպառողների կողմից կոյուղագծերը կոտրելու փաստին, հողամասերը, այդ թվում ապօրինի մշակվող, արտահոսող կոյուղաջրերով ռոտզելու նպատակով: Տվյալ դեպքում խոսքը Երևանի Նոր Նորքի 1-ին զանգվածին հարակից այգիների մասին է, որտեղ կոյուղաջրերով միրգ-բանջարեղեն է աճեցվում: Բարձրացված խնդիրը լայն արձագանք է ստացել հանրության շրջանում և դրականորեն է ազդել ընկերության իմիջի վրա:

Հաջորդ հրատապ խնդիրը հուլիսի 10-11-ին հանրապետության Էներգետիկ համակարգում տեղի ունեցած խոշոր վթարն էր, որն իր բացասական ազդեցությունն ունեցավ նաև ջրամատակարարման վրա: Դրանով պայմանավորված, ոչ միայն դադարեցին գործել համակարգի պոմպակայանները, այլ նաև «կուրացավ» ընկերության Կենտրոնական կարգավարական ծառայությունը, որը համակարգի կառույցներից ստացվող տեղեկատվության հոսքի դադարեցման պատճառով չէր կարողանում միջոցներ ձեռնարկել ջրամատակարարման կայունացման կամ վերականգնման համար: Այնուամենայնիվ, Հանրային կապերի բաժինը գտավ հնարավորություն այդ ընթացքում 2 անգամ անդրադառնալու խնդրին՝ հանրության շրջանում խուճապային տրամադրությունների դեմ առնելու համար: Նախ հայտարարության տարածվեց էլեկտրակայանների վթարի ու համակարգում ստեղծված իրավիճակի մասին, իսկ հաջորդ օրը ներկայացվեց «Վեոլիա ջուր» ՓԲԸ կողմից տարված աշխատանքն ու ջրամատակարարման վիճակը, որը գրեթե լիովին վերականգնվել էր:

Նույնպես ժամանակին հաջողվեց կասեցնել հանրության հնարավոր դժգոհությունը ընկերությունից, կապված Նուռնուսի այգեգործական թաղամասի բնակիչների բողոքների հետ: Օբյեկտիվորեն, վերջիններս իրենք պետք է վերանորոգեին սեփական ֆիզիկապես մաշված ու վթարված ջրագծերը, սակայն հաշվի առնելով իրավիճակը, «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ն ինքն իր վրա վերցրեց տվյալ խնդրի լուծումը, ապացուցելու համար, որ անտարբեր չէ սպառողների հոգսերի նկատմամբ: Հանրային կապերի բաժնի հաղորդագրությունն այս կապակցությամբ ԶԼՄ-ներից բացի արտատպեցին Կոտայքի մարզպետարանի ու Ջրային կոմիտեի պաշտոնական կայքերն ու ֆեյսբուքյան էջերը:

Հանրային կապերի բաժինը հուլիսին նաև զբաղվել է ամենօրյա մամուլի տեսությամբ, տարաբնույթ մամուլի հաղորդագրություններ է ուղարկել ԶԼՄ-ներին, կապ է պահպանել լրագրողների հետ՝ վերջիններիս բարձրացրած մասնագիտական և անձնական բնույթի հարցերին պատասխանելու համար: Խոսքը մասնավորապես Radio Av-

rora, Zangezour TV, News.am կայքի, Հայաստանի Հանրապետություն պաշտոնաթերթի մասին է: Առավել ակտիվ են եղել կապերը ATV հեռուստաալիքի հետ, որը հաճախակի է անդրադառնում բնակիչների բարձրագրած կենցաղային խնդիրներին, այդ թվում ջրամատակարարմանը:



**ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**




## 5.1 Փաստաթղթերի մշակում

● Սույն թվականի հուլիսի 11-ին ՈԱԱ Ծառայությունում տեղի ունեցավ աշխատանքային հանդիպում «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ի փորձագետների հետ: Այս շրջանակներում, «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի պահանջներից ելնելով, հաշվետու ամսվա ընթացքում «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ի փորձագետների կողմից իրականացվեցին Ընկերության թվով 19 քլորակայանի տեխնիկական անվտանգության վկայագրի փորձաքննության աշխատանքներ և տրվեցին դրական եզրակացություններ:

● Ելնելով Վեոլիա Գրուպի «Բարձր ռիսկերի հետ կապված գործունեության կառավարման ստանդարտների» պահանջներից, ծառայությունը մշակեց և գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի համաձայնությանը ներկայացրեց Ընկերության վարչական շենքերի ավտոկայանատեղերում գծանշման և ճանապարհային նշանների կիրառման տեխնիկական մասնագիրը:

● Կատարվել են «Առողջության և անվտանգության միջազգային շաբաթ - 2019» միջոցառման նախապատրաստական աշխատանքներ, մասնավորապես միջոցառման պաստառների և շապիկների թարգմանություն և ֆայլերի հանձնումը տպագրության:



## 5.2 Դասընթացներ/սեմինարներ



● Հաշվետու ամսում Ֆրանս հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնում (ՖՀՄՈՒԿ) շարունակվեց Ընկերության «Արևելք» և «Արևմուտք» տարածաշրջանային տնօրինությունների 18 աշխատակցի համար «Խողովակաշարող» եռամսյա մասնագիտական դասընթացների III փուլը:

● Հուլիսի 3-ին և 4-ին կայացավ ընկերության ԵՏՍՏ Տնօրինության 20 մասնագետ տեսուչի մասնագիտական որակավորման դասընթացի ավարտական քննությունը:




● «Նարեկ» գիտահետազոտական ընկերությունում հուլիսի 3-ին Ընկերության 1 աշխատակցից անցավ Էլեկտրաանվտանգության 2-րդ խմբի որակավորման դասընթաց:

● Ելնելով Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների և Բաժանորդների սպասարկման որակի բարելավման, Բաժանորդների սպասարկման գրասենյակի աշխատակիցների և 1-85 հեռախոսակենտրոնի օպերատորների սպասարկման ոլորտի գիտելիքների զարգացման, որակյալ սպասարկման ծառայություն մատուցելու և յուրաքանչյուր Բաժանորդի սպասարկման բավարարվածությանը հասնելու, Բաժանորդների սպասարկմանը վերաբերող հարցերին որակյալ պատասխաններ տրամադրելու, ինչպես նաև Վարձակալության պայմանագրով սահմանված «ՀԿՑ CS3» բաժանորդների բավարարվածություն» ցուցանիշի շարունակական բարելավման անհրաժեշտության պահանջներից, Ծառայության կողմից շարունակվեց 1-85 հեռախոսակենտրոնի 16 օպերատորների աշխատանքի որակի մոնիթորինգը:


Ուսումնասիրելով վերոնշյալ մոնիթորինգի արդյունքները, Ծառայությունը մշակեց 1-85 հեռախոսակենտրոնի օպերատորների համար նախատեսվող 30 ժամյա մասնագիտական դասընթացի թեմաները՝ «Մասնագիտական դասընթաց» 19 ժամ և «Մասնագիտական հմտությունների բարելավման օժանդակ դասընթաց» 11 ժամ տևողությամբ: Դասընթացը նախատեսվում է մեկնարկել օգոստոս-սեպտեմբեր ամիսներին:

● Ելնելով Վեոլիա Գրուպի «Փակ տարածքների կառավարում» բարձր ռիսկերի կառավարման ստանդարտի պահանջներից, և Ընկերության կողմից 2018 թվականին ձեռքբերված թվով 50 MicroClip X3 մոդելի գազավերլուծիչների ստուգաչափման անհրաժեշտությունից, սույն թվականի հուլիսի-1-ին ՈԱԱ ծառայության պետ Դավիթ ԱԴԱՄՅԱՆԸ մասնակցեց Ֆրանսիայի ք. Վալանսում գտնվող Հոնիվել Ընկերության Ուսումնական դեպարտամենտում կազմակերպված «MicroClip X3 գազի դետեկտորների սպասարկման, աշխատանքային վիճակի թեստավորման և ստուգաչափման» որակավորման դասընթացին և քննությանը, արդյունքում վերջինիս շնորհիվ «Մակարդակ-1» որակավորումը փաստող սերտիֆիկատ:

**2018-2019թթ. կազմակերպված դասընթացներին/թեստավորումներին (ԴԱԱԸՆԹԱՅ) մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ**



**2019թ. ԴԱԱԸՆԹԱՅՆԵԴԻՆ մասնակցած աշխատակիցների քանակներն ըստ դասընթացների տիպերի**



\* 2019թ. վերապատրաստված աշխատակիցների որոշ մասը մասնակցել է երկամսյա-եռամսյա դասընթացների: ԾԱԱՈԹՈՒԹՅՈՒՆ. ՖՆՄՈՒԿ հիմնադրամում կազմակերպված երկամսյա-եռամսյա դասընթացներին մասնակցել է Ընկերության 115 աշխատակից

### 5.3. Համագործակցություն ՀՀ ԱԻ նախարարության հետ

● Համաձայն «Արտական իրավիճակներում ՀՀ Շիրակի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2019թ-ի հիմնական միջոցառումների պլանի» սույն թվականի հուլիսի 12-ին ՈԱԱ Ծառայության համակարգմամբ «Շիրակ» տեղամասի շահագործման թիմը մասնակցեց «Գյումրի-Շիրակ ավտոճանապարհի հատվածում «Մարալիկ» 600 մմ տրամագծով ջրատարի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպում և իրականացում» թեմայով ցուցադրական հատուկ տակտիկական ուսուսմանը: Ուսուսմանը նպատակն էր ստուգել արձագանքող ուժերի պատրաստվածությունը, ինչպես նաև կատարելագործել գործնական հմտությունները:

### 5.4. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացող միջոցառումների կիրառում

● Ծառայության անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին պլանավորված Անվտանգության ստուգայցներ Տեխնիկական տնօրինության թվով 18 («Մայմեխ», «Ղազարավան», «Բազմադրյուր», «Եզնակ», «Ակունք», «Ակներ», «Մուրբ Վարդան», «Ապարան», «Գառնի-1», «Գառնի-2», «Կաթնադրյուր», «Արզական», «Արզնի», «Ծարավադրյուր», «Ձորադրյուր», «Հայկաշեն-1/2», «Հայկաշեն-3/4», «Շոր-Շոր») քլորակայանում, թվով 5 («Եզնակ», «Գյումուշ», «Հայկաշեն-1/2», «Հայկաշեն-3/4», «Շոր-Շոր») պոմպակայանում, «Արնեյք» տարածաշրջանային տնօրինության թվով 1 («Վարդենիս») ԿՄԿ-ում և 4 (Ապարանի ու Վարդենիսի առևտրային և շահագործման տեղամասեր,) վարչական շենքում:

● ՈԱԱ Ծառայության կողմից ուսուսման ընթացքում իրականացվող վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով զմանշման, էքսկավատորի անվտանգ շահագործման ուղղությամբ:





«ՎԵՈՒԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ  
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1  
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա  
E-mail: info@vjur.am